

չի բաղձար անոր վերադարձը եւ իրեն տը-
հաճելի պիտի ըլլար ժխտական պատասխան:
Մը տալ իրենց վեհափառութեան: Նուիրա-
կին այս նամակին պատճառաւ թազաւորն
ու մայր թագուհին ընթացք չեն տար հայ
երեսփոխաններու ազերսազրին (19):

Ս. Ժողովին թելադրանքին համաձայն
Առաքելական Նուիրակը կը խնդրէ նաև
թազաւորէն որ համոզէ հայ երեսփոխան-
ները, որպէսզի օգնական Եպիսկոպոս մ'ըն-
տրեն: Թազաւորը կը կատարէ այս խնդրան-
քը, հայոց առաջարկելով սբ իրենց Թորոսո-
վիչ Արքեպիսկոպոսին օգնական մ'ընտրեն
յանձին Քիւրեմովիչ Եպիսկոպոսին: Սա-
կայն հայ երեսփոխանները կասկածելով որ
այս մասին միջամտութիւն կը գործէ Առա-
քելական Նուիրակը, եւ վստահ ըլլալով որ
թազաւորը զիրենք պիտի չստիպէ, դժուար-
ութիւններ ցոյց կու տան Նուիրակին ըսե-
լով թէ իրենց օրէնքին համաձայն, Արքե-
պիսկոպոսին կենդանութեան ժամանակ,
չեն կրնար անոր տեղը ուրիշ մը պատուի-
րակել, թէ այլուստ Քիւրեմովիչ Եպիսկո-
պոսն արդէն Թորոսովիչին պակասը կը լը-
րացնէ, թէ օգնական եպիսկոպոսի մը ան-
ուանումով իրենց հովիւն իշխանութենէ
պիտի զրկուէր բոլորովին, եւ թէ Թորոսո-
վիչ Արքեպիսկոպոսին մահէն ետք, իրենք
արդէն կաթողիկէ եպիսկոպոս մը պիտի
ընտրէին, ուստի պատճառ չկայ վախնալու